

**ՄԱՅՐԵՆԻ**

**ՆՐԱԳԻՐ**

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 1-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության  
ուսումնառության  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

**ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Մայրենի լեզվի ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Հայոց լեզվի և գրականության ուսումնասիրությունը առաջարկվում է կառուցել հետևյալ **սկզբունքներով**.

**Ժողովրդավարական.** սովորողը մասնակցում է ուսումնառության պլանավորմանը և դրա իրականացման գործընթացին, նրա կարծիքի և հետաքրքրությունների հիման վրա են ծրագրվում նյութի բովանդակությունը, մշակվում ընթացիկ աշխատանքները:

**Անձնակենտրոն կամ սովորողակենտրոն** ուսումնառություն. սովորողն ինքնուրույն է, աշխատում է հիմնականում դասարանում՝ ուսուցչի և ընկերների հետ համագործակցելով: Ուսումնառության գործընթացում շեշտադրվում են սովորողի անհատականությունը, անձնային ներդաշնակ զարգացումը, սովորելու ոճը, հետաքրքրությունների և կարիքների շրջանակը: Սովորողը նախագծում և իրականացնում է տարաբնույթ հետազոտություններ:

**Տարբերակված ուսուցում.** ուսումնառության բովանդակությունը, կրթական միջավայրը, տրվող առաջադրանքները, չափորոշչային պահանջները ձևավորվում են՝ հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պահանջները, կարողությունները:

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

1. Լեզուն **մտածողության** միջոց է. հայոց լեզու ուսումնասիրելու ընթացքում պիտի զարգանան սովորողի քննադատաբար և պատկերավոր մտածելու, երևակայությունը դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքով իր մտածումները, անհանգստությունները ձևակերպելու և վերարտադրելու կարողությունը: Այսինքն՝ հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության **հիմնական նպատակը բանավոր և գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է:**
2. Լեզուն **հաղորդակցման** միջոց է. հայոց լեզվի և գրականության ուսումնառությունը պիտի զարգացնի սովորողի՝ մարդկանց հետ տարբեր միջոցներով և եղանակներով (ժեստերի լեզու, ցուցադրում, ունկնդրում) հաղորդակցվելու, համագործակցելու, ցանկացած միջավայրում իրեն լիարժեքորեն դրսևորելու, բանակցելու, լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունները: **Բանավոր և գրավոր խոսքով հաղորդակցվելու կարողության զարգացումը** թե՛ սովորողի, թե՛ դասավանդողի հիմնական նպատակադրումն է:
3. Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալու տեքստի **ենթիմաստը**, հեղինակի ասելիքը, հերոսների արարքների դրդապատճառները, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները: Գրական հերոսների արարքների, բնավորության վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալու, ճանաչելու ինքն իրեն և այլ մարդկանց, այս ամենի շնորհիվ սովորողը կկարողանա կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ: Տարբեր ոճերի տեքստերի մանրագնի ուսումնասիրումը կհանգեցնի գլխավոր նպատակադրման իրականացմանը, այն է՝ **բանավոր և գրավոր խոսքի առկայություն, մշտական զարգացում և կատարելագործում:**
4. Հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսումնառությունը ամուր հիմք է ստեղծում **այլ առարկաներ** ուսումնասիրելու, վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով նաև ժեստերի լեզվով հաղորդելու համար:
5. Հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսումնառությունը **սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի** ձևավորման և զարգացմանն է ուղղված: Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, դրանց համակողմանի վերլուծությունը քննադատական և պատկերավոր մտածողության

գարգացման նպատակ ունեն: Գրական-գեղարվեստական տեքստերի լեզվաոճական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները գարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, արժևորել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ:

Վերոնշյալ նպատակների իրականացման հիմնական ճանապարհներ են **լսել և դիտել, խոսել, կարդալ, գրել, ցուցադրել և այլն՝ նկատի ունենալով նաև ուսումնառության համընդհանուր ձևավորման մոդելը (UDL):**

**Լսել.** լսի և հասկանա փոխանցվող տեղեկույթը, քննողաբար վերաբերվի իր և ուրիշների ենթադրություններին, ակտիվորեն լսի և հարգաբով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին:

**խոսել.** հաղորդակցման տարբեր միջոցներով (ժեստերի լեզու, նկար) մասնակցի երկխոսության, պատմի տեսածի, լսածի, կարդացածի բովանդակությունը, նկարագրի տարաբնույթ երևույթների փոխակապակցվածությունը, արտահայտի, հիմնավորի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, մեկնաբանի և վերլուծի իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները: Հանդես գա մեկնախոսությամբ, լսարանին ներկայացնի իր տեսակետը՝ հիմնավորելով փաստերով և տվյալներով:

**Կարդալ.** հայերենի ուղղախոսությանը հատուկ ճիշտ արտասանությամբ և հնչերանգով, հասկանալով կարդա տարբեր ոճերի տեքստեր, հաղորդի կարդացածի իմաստը, տրամադրությունը:

**Գրել.** գրի առնի լսած, կարդացած խոսքից հիմնական միտքը, դուր եկած հատվածը, վերարտադրի և նորովի շարադրի լսածը, կարդացածը, տեսածը. բառերով ձևակերպի և հնարավորինս ճշգրիտ վերարտադրի սեփական երևակայության մեջ ստեղծված պատկերները: Հորինի, ստեղծի գրավոր պատկերավոր խոսք:

**Ցուցադրել.** կարողանա պատրաստած նյութը ներկայացնել նկարներով, աղյուսակներով, սահիկաշարով, մեդիայի տարբեր միջոցներով, կատարի համապատասխան գրառումներ, ինչպես հնչյունային խոսքով, այնպես էլ ժեստերի լեզվով պատմի իր հետազոտության մասին:

**Հանրակրթական դպրոցի 1-12-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության ուսումնառությունը բաժանվել են հետևյալ փուլերի.**

1. **Մայրենի լեզու** (իբրև մեկ միասնացած առարկա) – 1-6-րդ դասարաններ. ներառում է ընդհանրական, վերառարկայական և միջառարկայական թեմաներ, գրական և ոչ գրական տեքստեր, դրանց տրամաբանության, գեղագիտական կառուցվածքի, պատկերավորման միջոցների ուսումնասիրում:
2. **Հայոց լեզու** (իբրև մեկ առարկա) 7-12-րդ դասարաններ. ներառում է հայոց լեզվի լեզվաբերականական, ոճաբանական համակարգի միայն գործնական նշանակություն ունեցող թեմաները, որոնց ուսումնառությունը կօժանդակի աշակերտի լեզվամտածողության, բանավոր և գրավոր խոսք կազմելու, հաղորդակցական կարողությունների գարգացմանը:
3. **Գրականություն** (իբրև մեկ առարկա) 7-12-րդ դասարաններ. ներառում է հայ դասական, ժամանակակից և արտասահմանյան գրականության լավագույն նմուշները, որոնց ուսումնառությունը հիմնականում տեքստի կառուցվածքի, տրամաբանության, գեղագիտության ուսումնասիրում է, որը կօգնի գարգացնելու սովորողի երևակայությունը, պատկերավոր և քննադատական մտածողությունը, ստեղծարարությունը, բանավոր և գրավոր խոսք կազմելու կարողությունը:
4. Կրթարաններն իրենց ընտրությամբ կարող են ունենալ նաև հատուկ դասաժամեր *խոսքի մշակույթից, հռետորական արվեստից (ճարտասանությունից), դրամատուրգիայից* և այլն:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՄՆԵՐ

Հայոց լեզվի (մայրենի) և գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների, պահանջների, սահմանված կարողունակությունների հիման վրա մշակված վերջնարդյունքներով սահմանվել են **հիմնական և ենթահասակացություններ**, որոնց համապատասխան, ինչպես նաև տարիքային ամեն խմբի համար սահմանված են 4-5 կետով չափորոշչային հստակ պահանջներ կամ չափանիշներ: Ամեն հասակացությանը համապատասխան սահմանված չափանիշները սովորողի կարողունակությունների ձեռքբերման գնահատման հիմքն են: Այսինքն՝ ուսուցիչը միավորային գնահատման սանդղակները կազմելու է՝ առաջնորդվելով ամեն դասարանի համար սահմանված վերջնարդյունքներով:

Հարկ է նկատել, որ արդի դարաշրջանում **երկչափ** կրթությունից՝ **գիտելիք - կարողություն կամ հմտություն**, անցում է կատարվել **եռաչափ** կրթության՝ **հասկացություն - գիտելիք -**

**կարողություն/հմտություն:** Այդ է պատճառը, որ հայոց լեզվի և գրականության վերջնարդյունքները սահմանվել են որոշակի հասկացությունների և ենթահասկացությունների տիրույթներում:

1-12-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության ուսումնառության համար սահմանված են հետևյալ **հիմնական հասկացությունները՝**

**Չաղորդակցում**

**Ընթերցանություն/գրականություն**

**Լեզվական համակարգ**

**Ստեղծարարություն**

**Ինքնություն**

Ամեն հիմնական հասկացություն ունի իր ենթահասկացությունները, որոնք որոշ տարբերություններ ունեն՝ պայմանավորված առարկայի յուրահատկություններով և ուսումնասիրության պահանջներով, ինչպես նաև սովորողների տարիքային առանձնահատկություններով: 1-6-րդ դասարաններում, քանի որ հայոց լեզվի և գրականության միասնացած ուսուցում է իրականացվում, սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

**Չաղորդակցում՝** բանավոր հաղորդակցում, գրավոր հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում.

**Ընթերցանություն** (գրականություն)՝ տեքստի հասկացում, տեքստի գեղագիտություն, տեքստի տրամաբանություն.

**Լեզվական համակարգ՝** հայերենի ինչյունական, բառակազմական, քերականական համակարգեր.

**Ստեղծարարություն՝** կապակցված խոսք, տեքստ, հետազոտում/նախագիծ:

**Ինքնություն՝** վերաբերմունք և արժևորում:

Վերջնարդյունքները ներկայացված են աղյուսակով, տարիքային բոլոր խմբերի, այսինքն՝ բոլոր դասարանների համար սահմանված են վերջնարդյունքները կամ չափանիշները, որոնք 4-5-ն են, սահմանված են հստակ և չափելի: Այնպես որ ուսուցչի համար տեսանելի և մատչելի կլինի օգտվել դրանցից և կազմել գնահատման սանդղակներ՝ սովորողների՝ վերջնարդյունքներին համապատասխան ձեռքբերումները գնահատելու համար: Հիմնական հասկացություններից **ինքնությունը՝** վերաբերմունք և արժևորում ենթահասկացություններով, միավորային գնահատում չի ենթադրում:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԾՐԱԳՐԵՐ

Մայրենի լեզվի ծրագրերում ընդգրկված նյութը համապատասխանում է տարիքային տվյալ խմբի առջև դրված նպատակներին և խնդիրներին, այսինքն՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին ամբողջությամբ:

Նկատի ունենալով սովորողների տարիքային առանձնահատկությունները, նրանց հետաքրքրության շրջանակը և պահանջմունքները՝ պիտի նշել.

- տարրական դպրոց. 6-9 տարեկան աշակերտների հետաքրքրության շրջանակը պատվում է մեզ շրջապատող բնության, կենդանական և բուսական աշխարհների շուրջ. հետևաբար տեքստերը, ընթերցանության նյութերը հիմնականում պիտի ներկայացնեն երեխային շրջապատող կենդանական և բուսական աշխարհը.
- միջին դպրոցի առաջին աստիճան. 10-13 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը ժողովրդական գրույցները, լեզենդները, առասպելները, դյուցազներգություններն են, այսինքն՝ առասպելական աշխարհն է. հետևաբար 5-6-րդ դասարաններում տեքստերը հիմնականում բանահյուսական նյութեր և դրանց հեղինակային մշակումներ են:

## ԲԱՏԱՏՐԱԳԻՐ

1-6-րդ դասարաններում մայրենի լեզվի ծրագրերը ներկայացված են աղյուսակների տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Վերջնարդյունքները
4. Բովանդակությունը
5. Առաջարկվող գործունեության ձևերը
6. Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները
7. Միջառարկայական կապերը

## 8. Կապը Հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ

Յուրաքանչյուր դասարանում ուսումնառելու համար առանձնացվել են որոշակի *թեմաներ (1)*, որոնք համապատասխանում են տարիքային տվյալ խմբի հետաքրքրություններին, առանձնահատկություններին և պահանջներին:

Նախ նշվում են *դասարանը*, տվյալ դասարանում մայրենի լեզվի ընդհանրական *ժամաքանակը (1)* ուսումնական տարվա համար, ապա՝ *թեմայի վերնագիրը (1)*, տվյալ թեմային տրամադրվող մոտավոր *ժամաքանակը*: Հաջորդող հորիզոնական սյունակներում նշվում են թեմայի ուսումնառության *նպատակները (2)*, ապա ակնկալվող *վերջնարդյունքները (3)*, այսինքն՝ տվյալ թեմայի ուսումնասիրության ավարտին ինչ պիտի իմանա և կարողանա աշակերտը: Հիմնական շեշտադրումը սովորողի կարողունակությունների, բանավոր և գրավոր խոսք կազմելու հմտության զարգացումն է:

**Մայրենի լեզվի ուսումնառությունը 1-6-րդ դասարաններում:** 1-6-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության ուսումնառությունը հանդես է գալիս միասնացած, որպես մայրենի լեզվի դասընթաց և 1-4-րդ դասարաններում վերառարկայական, իսկ 5-6-րդ դասարաններում՝ միջառարկայական բնույթ ունի: 1-4-րդ դասարանների ծրագրերում նշվում են հիմնական թեմաներ, որոնց շրջանակում պլանավորվում և իրականացվում է ուսումնառությունը: Հիմնական թեմաները 1-4-րդ դասարաններում նույնն են՝ «Ով ենք մենք», «Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ», «Ինչպես է «աշխատում» աշխարհը», «Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում», «Ինչպես ենք միասին ապրում մոլորակում», բայց դրանք աստիճանաբար խորանում և ընդլայնվում են ենթաթեմաների միջոցով (մոտեցումը՝ ըստ Միջազգային բակալավորիատի (<https://www.ibo.org/>): Ենթաթեմաների ձևակերպումները կարող են փոխվել ուսուցիչների և դասագրքերի հեղինակների հայեցողությամբ՝ հարազատ մնալով թեմայի գաղափարախոսությանն ու բովանդակությանը: Ամեն դասարանում յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունը կարող է իրականացվել նվազագույնը մեկ, առավելագույնը երեք ենթաթեմաների միջոցով:

Տարրական դասարաններում չի նախատեսվում լեզվաբերականական գիտելիքների տեսական ուսումնասիրություն. քերականական օրինաչափությունների տեսական բացատրություններ չեն տրվում, դրանք ուսումնասիրվում են գործնական ճանապարհով՝ առանց լեզվաբանական եզրույթների: Այսպիսի եզրույթներ սկսում են արծարծվել սկսած 5-6-րդ դասարաններից, որտեղ ուսումնասիրում են *ինչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, ինչյունափոխություն* բաժինները միաժամանակ: Օրինակ՝ եթե ուսումնասիրում են *բ-պ-փ* բաղաձայնների ուղղախոսությունը և ուղղագրությունը, ապա զուգահեռ տրվում են նաև ուսումնասիրվող բառերի կազմությունը, ինչյունափոխությունը, բառացանկում տեղ գտած բառերի բացատրությունը, հոմանիշները և հականիշները՝ մատչելի բացատրություններով:

1-6-րդ դասարաններում, ինչպես նաև հայոց լեզվի (7-12-րդ դասարաններ) ուսումնասիրության համար իբրև ելակետ և նվազագույն միավոր տեքստն է. ընտրվում են ինչպես գրական, այնպես էլ ոչ գրական, այսինքն՝ ուսումնաճանաչողական բնույթի տեքստեր և դրանց հիման վրա բացահայտվում են լեզվաբերականական երևույթները:

**«Միջտեքստային կապեր» բաժնում** սովորողները կառնչվեն տարբեր տեքստերի միջև գոյություն ունեցող կապերին՝ սկսած վերնագրից, բնաբանից մինչև հղումների համակարգերն ու գաղափարական հարցադրումները: Նրանք հնարավորություն կստանան բացահայտելու անցյալ և ներկա գրական կապերը, հասկանալու տեքստերի ընդհանրությունները կամ շեղումները ընդունված ձևերից: Այս բաժնի հետազոտական հիմքը համեմատական վերլուծությունն է տարբեր տեքստերի միջև, ինչպես նաև միևնույն խնդրի, թեմայի բազմաթիվ դրսևորումների և տեսակետների քննությունը:

Բացի դրանից՝ ուսումնասիրվող գրական երկերի և հեղինակների ազատ ընտրությունը նպաստում է տարբերակված ուսուցման իրականացմանը. սովորողները հնարավորություն կունենան առաջարկված ստեղծագործությունների և հեղինակների ցանկից ընտրելու իրենց առավել հոգեհարազատ երկեր՝ դրանով ընդլայնելով հետաքրքրության և իմացության շրջանակը:

**Առաջարկվող գործունեության ձևեր (5)** բաժնում ներկայացված են դասաժամին կամ դրանից դուրս սովորողի կատարելիք գործը: Այս բաժինը կառուցված է պարզից բարդը գնալու սկզբունքով և հիմնականում հենվում է ամերիկացի մանակավարժ և հոգեբան Բենջամին Բլումի աստիճանակարգով սահմանված բայերով նշվող գործողության քայլաշարի վրա: Այս սկզբունքով աշխատելու դեպքում ապահովվում է տարբերակված ուսուցումը, ինչպես նաև աշակերտի գործունեության բազմազանությունը նույն թեմայի շրջանակում:

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ (6) բաժնում** առանձնացվել են ութ հասկացություններ, որոնցից 2-3-ը կարող են կիրառվել տվյալ թեմայի ուսումնառության շրջանակում: Դրանք ապահովում են հայոց լեզվից և գրականությունից ուսուցանվող թեմայի կապը այլ առարկաների հետ: Առանձնացվալ են հետևյալ հասկացությունները՝

1. Օրինաչափություն
2. Պատճառ և հետևանք
3. Կառուցվածք և գործառույթ
4. Կայունություն և փոփոխություն
5. Անհատներ և հարաբերություններ
6. Ժամանակ և տարածություն
7. Անհատական և մշակութային արժեհամակարգ
8. Փոփոխություն և զարգացում

Մայրենի լեզվի (միասնացած հայոց լեզու և գրականություն) ուսումնառության վերջնարդյունքներ

ՀԻՄՆԱ ԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	ԵՆԹԱ- ՀԱՍԿԱՑՈՒ ՅՈՒՆ	ՎԵՐՁՆԱԴՅՈՒՆԸ			
		1-ին դասարան	2-րդ դասարան	3-րդ դասարան	4-րդ դասարան
<b>ՀԱՂՈՐ ՂԱԿՑՈՒՄ</b>	<b>Բանավոր հաղորդակ ցում</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանալի իրեն ուղղված խոսքը, պատասխանի հարցերին:</li> <li>2. Պատասխանի տեքստի ընդհանուր բովանդակության վերաբերյալ հարցերին:</li> <li>3. Հարցերի օգնությամբ պատմի ապրածի, դիտածի և խոսի ցանկությունների մասին:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանալի և համապատասխան արձագանք տալու լսածին:</li> <li>2. Ձևակերպի հարցեր բանավոր ընթերցած կամ տեխնոլոգիական որևէ միջոցով ունկնդրած տեքստի հիմնական գաղափարի վերաբերյալ:</li> <li>3. Պատմի ապրածի, դիտածի, ընթերցածի մասին, արտահայտի սեփական զգացումները, ցանկությունները:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանալի և հարգանքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին ու գաղափարներին:</li> <li>2. Ձևակերպի հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ, պատասխանի իրեն ուղղված հարցերին:</li> <li>3. Նախընտրած ձևով և եղանակով վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը, նկարագրի տարբեր առարկաներ և երևույթներ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Լսի, հասկանալի տարբեր մարդկանց տեսակետներ, արտահայտի իր կարծիքը կամ վերաբերմունքը դրանց վերաբերյալ:</li> <li>2. Ձևակերպի հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ ճշգրտումներ անելու նպատակով, պատասխանի իրեն ուղղված հարցերին:</li> <li>3. Տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը, նկարագրի տարաբնույթ երևույթներ, ցույց տալով դրանց փոխկապակցվածությունը:</li> </ol>

		<p>4. Անվանի առարկաներ, երևույթներ՝ դրանց վերագրելով 1-2 հատկանիշ:</p> <p>5. Արտասանի մանկական բանաստեղծություններ, չափածո հանելուկներ (ցանկություն հայտնելու դեպքում), պատմի փոքրիկ պատմություններ, հեքիաթներ՝ ցույց տալով հիմնական գաղափարի կամ ուղերձի ընկալումը:</p>	<p>4. Նկարագրի մարդկանց, վայրեր, իրադարձություններ, առարկաներ, երևույթներ՝ պարզ արտահայտելով մտքերն ու զգացումները:</p> <p>5. Արտահայտիչ արտասանի մանկական բանաստեղծություններ (ցանկություն հայտնելու դեպքում), պատմի պատմություններ, տարբեր ժողովուրդների հեքիաթներ՝ ներկայացնելով հիմնական գաղափարը կամ ուղերձը:</p>	<p>4. Արտահայտի սեփական տեսակետը, քննարկի իր ցանկությունները, խոսի իր զգացումների մասին, մասնակցի բանավեճի, ներկայացնի իր մտեցումները:</p> <p>5. Արտահայտիչ արտասանի բանաստեղծություններ (ցանկություն հայտնելու դեպքում), պատմի պատմություններ, հեքիաթներ, առակներ՝ դուրս բերելով հիմնական գաղափարը կամ ուղերձը:</p>	<p>4. Արտահայտի և հիմնավորի սեփական տեսակետը, մեկնաբանի սեփական զգացումները, ցանկությունները, մասնակցի բանավեճի, հանդես գա փաստարկված խոսքով:</p> <p>5. Արտահայտիչ արտասանի բանաստեղծություններ (ցանկություն հայտնելու դեպքում), արձակ հատվածներ, պատմի պատմություններ, հեքիաթներ, առակներ՝ դուրս բերելով հիմնական գաղափարը կամ ուղերձը և մեկնաբանի՝ ինչպես է այն փոխանցվում տեքստի միջոցով:</p>
	<p><b>Գրավոր հաղորդակցում</b></p>	<p>1. Տարբերակի հայերենի տպագիր և ձեռագիր տառերը, ճիշտ գրի ձեռագիր մեծատառերն ու փոքրատառերը:</p> <p>2. Արտագրի մի քանի նախադասություններից կազմված տեքստեր ձեռագիր և տպագիր օրինակներից:</p>	<p>1. Արտագրի ոչ մեծ տեքստեր՝ կատարելով տրված առաջադրանքները:</p> <p>2. Գրավոր պատասխանի կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ հարցերին:</p> <p>3. Տրված հարցերի միջոցով վարի</p>	<p>1. Արտագրի տեքստեր՝ կատարելով տրված առաջադրանքները:</p> <p>2. Ըստ պլանի գրավոր շարադրի կարդացածի, լսածի, դիտածի մասին:</p> <p>3. Կազմի երկխոսության</p>	<p>1. Արտագրի տեքստեր՝ կատարելով լեզվական և ստեղծագործական առաջադրանքներ:</p> <p>2. Կազմի պլան և գրավոր շարադրի կարդացածի, լսածի, դիտածի մասին՝ պահպանելով դեպքերի ժամանակագրությունը:</p> <p>3. Կազմի երկխոսության</p>

			<p>երկխոսություն դասընկերների, ուսուցիչների, ծնողների հետ և կատարի նշումներ:</p> <p>4. Բառերով և բառա կապակցությունն երով գրավոր արտահայտի իր հույզերը կարդա ցած ստեղծագոր ծության, ունկն դրած երաժշտու թյան, դիտած ֆիլ մի կամ ներկա յացման մասին, կազմի շնորհավո րական բացիկ:</p>	<p>հարցերը, վարի երկխոսություն տարբեր մարդկանց հետ և կատարի նշումներ, ամբողջացնի դրանք:</p> <p>4. Գրի իր սիրելի գբադմունքի, մարդկանց, խաղալիքների, մասին, բնութա գրի գովազդվող առարկան, կազ մի հրավիրա տոմս, բացիկ:</p>	<p>հարցերը, վարի երկխոսություն տարբեր մարդկանց հետ, կատարի նշումներ և ամբողջացնի դրանք մի քանի նախադասությու ններով:</p> <p>4. Մի քանի նախա դասությամբ գրի իր տպավորութ յունները և վերա բերմունքը ընթերցածի, նկարի, երաժշտ ության, ներկա յացման, կինոն կարի մասին, կազմի գովազդա յին հոլովակի պարզ տեքստ, հայ տարարութ յուն, հրավիրա տոմս, բացիկ:</p>
<p><b>Ոչ խոսքային հաղորդակցո ւմ</b></p>	<p>1. Իր հույզերն արտահայտի ժեստերի և դիմախաղի միջոցով:</p> <p>2. Նկարելով արտահայտի լսածի, դիտա ծի վերաբեր յալ իր հույ զերն ու զգա ցումները:</p>	<p>1. Իր հույզերն ու մտքերը արտահայտի ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, զգա դիմացիկի հույզերը և դրսևորի համապատասխ ան վերաբերմունք:</p> <p>2. Պարզ խորհրդա նիշների միջո ցով պատկերի լսածը, տեսածը, ընթերցածը, զգա ցածը:</p> <p>3. Կիրառի պարզ</p>	<p>1. Հասկանա մարդու պահվածքի դրոպապատճառնե րը, դրսևորի համապատասխ ան վարքագիծ:</p> <p>2. Լսած, տեսած, ընթերցած տեղե կությունը լրաց նի աղյուսակի մեջ:</p>	<p>1. Հասկանա մար դուն, նրա հույ զերը՝ հետևելով շարժումներին, դեմքի արտահա յտությանը, մարմնի դիրքին, դրսևորի համա պատասխան վարքագիծ:</p> <p>2. Ձեռք բերած տեղեկությունը, տեքստի բովան դակությունը ըստ հրահանգի հաղորդի գծա կարգի, աղյուսա կի միջոցով, ան հրաժեշտության դեպքում ավե լացնի նկարա գրություններ՝ գաղափարները, մտքերն ու զգա ցումները ճշգր տելու համար:</p> <p>3. Մեկնաբանի</p>	



		<p>3. Հասկանա նկարը, արտահայտի իր մտքերը պատկերվածի վերաբերյալ:</p> <p>4. Մտքերն ու զգացումներն արտահայտի դիմախաղի, ժեստերի, մարմնի միջոցով՝ մասնակցելով դերային և թեմատիկ խաղերի:</p>	<p>Լշաններ իր մտքերն ու հույզերն արտահայտելիս:</p> <p>4. Մնջախաղով ներկայացնի ընթերցածի, լսածի բովանդակությունը:</p>	<p>3. Մտքերն ու զգացումներն արտահայտի Լշանների միջոցով:</p> <p>4. Մասնակցի ստեղծագործության դերերով ներկայացմանը, դերային խաղերի՝ ստանձնելով որոշակի դերեր, մտքերն ու հույզերն արտահայտի այլընտրանքային տարբերակներով (մնջախաղ, գույներ, երաժշտություն, ծեփում և այլն):</p>	<p>տարաբնույթ Լշանները, համադրի, փոփոխի ըստ անհրաժեշտության:</p> <p>4. Մասնակցի ստեղծագործության դերերով ներկայացմանը, դերային խաղերի՝ ստանձնելով որոշակի դերեր, մտքերն ու հույզերն արտահայտի այլընտրանքային տարբերակներով (մնջախաղ, գույներ, երաժշտություն, ծեփում և այլն):</p>
<p><b>ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p><b>Տեքստի հասկացում</b></p>	<p>1. Ճիշտ, վարժ և հասկանալով ընթերցի արձակ և չափածո գրական պարզ տեքստեր, պատասխանի կարողացածի վերաբերյալ հարցերին, ձևակերպի հարցեր ընթերցածի հիմնական բովանդակության վերաբերյալ:</p> <p>2. Հասկանա տեքստի բովանդակության և նկարագրողական կապը, նկարագրողումն ու տեքստի մանրամասներն օգտագործի հերոսներին և դեպքերը նկարարելու</p>	<p>1. Հասկանալով և համապատասխան արագությամբ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, ներկայացնի կարդացածի բովանդակությունը՝ պատասխանելով հարցերին, ձևակերպի հարցեր տեքստի հիմնական գաղափարի վերաբերյալ:</p> <p>2. Տեքստի բովանդակության, բառերի ու արտահայտությունների և նկարագրողական միջոցով ներկայացնի հերոսներին, վերլուծի նրանց վարքն ու վերաբերմունքը տեքստում</p>	<p>1. Հասկանալով և արտահայտիչ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, պատասխանի հարցերին՝ հղում կատարելով տեքստին, ձևակերպի հարցեր, համեմատի ու հակադրի հերոսներին ու նրանց գործողությունները, բացատրի՝ ինչպես են դրանք ազդում տեքստի իրադարձությունների ընթացքի վրա:</p> <p>2. Վերլուծի հենակետային բառերի և արտահայտությունների ընտրությունը և կիրառումը սվյալ համատեքստում, բացատրի տեքստի նկարագրողական ազդեցությունը</p>	<p>1. Հասկանալով և արտահայտիչ ընթերցի արձակ և չափածո գրական տեքստեր, արտահայտի մտքեր ենթատեքստի, հերոսների ու նրանց խոսքերի, մտքերի, արարքների վերաբերյալ՝ կիրառելով տեքստի բառերն ու արտահայտությունները, մեկնաբանի դրանց ընտրությունը և գործածությունը համատեքստում</p> <p>2. Առաջարկի տեքստի նկարագրողական իր տարբերակը և մեկնաբանի տեքստին հարագատ բառապաշարով ու ոճով:</p>

		<p>համար:</p> <p>3. Տարբերի արձակ և չափաժող տեքստերը:</p> <p>4. Լսի, կարդա և հասկանա ոչ գրական պարզ տեքստի հիմնական մտքերը:</p>	<p>Նկարագրվող իրադարձությունների նկատմամբ:</p> <p>3. Տարբերի բանաստեղծությունը և հեքիաթը:</p> <p>4. Լսի, կարդա ոչ գրական պարզ տեքստեր և առանձնացնի կարևոր մտքերը:</p>	<p>տեքստի ընկալման վրա:</p> <p>3. Տարբերի բանաստեղծությունը, հեքիաթը, առակը, մանրապատում ստեղծագործությունները:</p> <p>4. Լսի, կարդա և հասկանա ոչ գրական տեքստեր, ըստ նպատակի առանձնացնի անհրաժեշտ տեղեկությունները:</p>	<p>3. Տարբերի գրական և ոչ գրական տեքստերը, գրական տեքստերի տեսակները (բանաստեղծություն, հեքիաթ, առակ, պատմվածք) և մանրապատում ստեղծագործությունները, համեմատի տարբեր ստեղծագործություններ և նույն թեմայի արժարժումը տարբեր գրական տեքստերում:</p> <p>4. Լսի, կարդա և հասկանա տարբեր բարդության և բովանդակության ոչ գրական տեքստեր, ըստ նպատակի դուրս բերի անհրաժեշտ տեղեկությունները:</p>
<b>ԼԵԶԿԱ ԿԱՆ ՀԱՄԱ ԿԱՐԳ</b>	<b>Հնչյուն և տառ</b>	<p>1. Տարբերակի հնչյունները (ձայնավոր և բաղաձայն), ճանաչի և գրի դրանց համապատասխան տառերը:</p>	<p>1. Գործնականում տարբերի միավանկ և բազմավանկ բառերը, գիտակցի ձայնավորի վանկարար արժեքը:</p> <p>2. Խոսելիս ճիշտ արտասանի բառերը, պահպանի հայերենի ուղղախոսական պարզ կանոնները:</p>	<p>1. Խոսելիս ճիշտ արտասանի բառերը, պահպանի հայերենի ուղղախոսական կանոնները:</p> <p>2. Պահպանի տեքստում հանդիպած բառերի ուղղագրությունը:</p>	<p>1. Խոսելիս ճիշտ արտասանի բառերը, պահպանի հայերենի ուղղախոսական կանոնները:</p> <p>2. Պահպանի տեքստում հանդիպած բառերի ուղղագրությունը:</p>
	<b>Բառապաշար</b>	<p>1. Նախադասության մեջ ընկալի բառը որպես լեզվական միավոր:</p>	<p>1. Ճանաչի բառը որպես պատկերավորման միջոց:</p>	<p>1. Ճանաչի բառի հիմնական բաղադրիչները (արմատ, ածանց), տարբերի պարզ,</p>	<p>1. Կազմի նոր բառեր՝ կիրառելով հայերենի բառակազմական</p>

			<p>2. Բացատրի որոշակի քանակի բառեր համատեքստում:</p> <p>3. Տարբերի բառերի իմաստային խմբերը (հոմանիշ և հականիշ բառեր):</p> <p>4. Խոսքում տարբերի գործողություն, առարկա, առարկայի որակական և քանակական հատկանիշ ցույց տվող բառերը:</p>	<p>բարդ և ածանցավոր բառերը:</p> <p>2. Իմանա բառերի ձևաիմաստային տեսակները, խոսքում կիրառի հոմանիշ և հականիշ բառեր:</p> <p>3. Հասկանա բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, խոսքում կիրառի դարձվածքներ:</p> <p>4. Օգտվի դպրոցական բառարաններից (բացատրական, հոմանշային):</p> <p>5. Կազմի տարբեր կառուցվածքով բառակապակցություններ, դրանք ճիշտ կիրառի բանավոր և գրավոր խոսքում:</p>	<p>առանձնահատկությունները:</p> <p>2. Խոսքում տեղին կիրառի հոմանշային շարքի բառերը:</p> <p>3. Բառերը կիրառի ուղիղ և փոխաբերական իմաստներով:</p> <p>4. Օգտվի բառարաններից (բացատրական, հոմանշային, դարձվածաբանական):</p> <p>5. Խոսքում կիրառի տարբեր կառուցվածք ունեցող բառակապակցություններ:</p>
	<b>Նախադասություն</b>	1. Տեքստում ճանաչի և առանձնացնի նախադասությունը որպես լեզվական միավոր:	1. Հարցերի միջոցով ընդարձակի նախադասությունները:	1. Խոսքի մեջ տարբերի նախադասություններն ըստ հաղորդակցման նպատակի, կետադրի դրանք:	1. Խոսքում կիրառի տարբեր հնչերանգի նախադասություններ:
<b>ՍՏԵՂԵԱ ԲԱՐՈՒ ԹՅՈՒՆ</b>	<b>Կապակցված խոսք: Տեքստ</b>	1. Ընկալի տեքստը որպես ամբողջություն, ճանաչի տեքստի բաղադրիչները:	1. Նկարագրի տեքստի կառուցվածքը՝ ներկայացնելով տեքստի սկիզբը և ավարտը:	1. Իմանա և կիրառի տեքստի տարբեր բաղադրիչները՝ հիմնական գաղափարը կամ անհրաժեշտ տեղեկությունը:	1. Ուսումնասիրի տեքստը՝ կիրառելով բովանդակային, խոսքային, լեզվաոճական վերլուծում, հասկանա և

			<p>2. Վերարտադրի տեքստը ստեղծագործության այս կամ այն հերոսի անունից:</p>	<p>դուրս բերելու նպատակով:</p> <p>2. Մեկնաբանի՝ ինչպես են բառերն ու արտահայտությունները կամ տարբեր հնարները ապահովում տեքստի հանգավորումը, երաժշտականությունը, իմաստային նրբերանգները:</p> <p>3. Նորովի վերարտադրի լսած, ընթերցած տեքստը, սկսի, շարունակի և ավարտի պատմությունը:</p> <p>4. Հորինի շարադրի բանավոր գրավոր պատկերավոր խոսք: և և</p>	<p>բացատրի հեղինակի մտադրությունը և ասելիքը:</p> <p>2. Չարգացնի տեքստը՝ հավելի, լրացնի, փոփոխի, նոր հերոս ավելացնի կամ ընդհակառակը՝ սեղմի, պակասեցնի:</p> <p>3. Հորինի պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն), մասնակցի խմբային խոսքի ստեղծմանը, ըստ տեքստի ստեղծի պաստառ, գրքույկ, սահիկաշար և այլն:</p> <p>4. Մշակի տեղեկությունը՝ ըստ նպատակի կիրառելով բառա յին և սխեմատիկ մոդելներ (գծագրեր, աղյուսակներ):</p>
<p><b>Հետազոտում. նախագիծ</b></p>	<p>1. Ձևակերպի հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ:</p>	<p>1. Ձևակերպի հարցեր, պլանավորի հարցերի բացահայտմանն ուղղված գործողությունների քայլաշարը:</p>	<p>1. Ձևակերպի հետազոտական հարց:</p>	<p>1. Ձևակերպի հետազոտության և նպատակը, հարցերը, պլանավորի ուսումնասիրության քայլերը:</p>	

		2. Հասկանա դիտած ֆիլմերի, տեսանյութերի, նկարաշարերի, ունկնդրած ձայնագրությունների բովանդակությու ունը, քննարկի ընկերների հետ:	2. Ընտրի գիրք կամ այլ ռեսուրս առաջարկված ցանկից և գտնի տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող հարցերի պատասխանները:	2. Օգտվի առաջարկված տպագիր կամ էլեկտրոնային ռեսուրսներից և հավաքի հետազոտության և առնչվող փաստեր, նյութեր:	2. Ուսումնասիրի տպագիր և էլեկտրոնային ռեսուրսներ, հավաքի հետազոտության և հարցերը մեկնաբանող նյութեր:
				3. Իրեն հետաքրքրող կամ հանձնարարված թեմայով պատրաստի հաղորդում, կատարի եզրահանգումներ:	3. Շարադրի հետազոտության և արդյունքները՝ կատարելով դիտարկումներ, արտահայտելով կարծիք:
				4. Ներկայացնի հետազոտության արդյունքները՝ աշխատելով անհատապես կամ խմբում:	4. Ներկայացնի հետազոտության և արդյունքները՝ կիրառելով ներկայացման տարբեր միջոցներ:
<b>ԻՆՔՆՈՒԹ ՅՈՒՆ</b>	<b>Վերաբեր մունք և վարքագիծ</b>	1. Մասնակցի խմբային աշխատանքների, պահպանելով սահմանված կանոնները:	1. Համագործակցի ընկերների հետ, մասնակցի խմբային աշխատանքների, քննարկումների, ստանձնի տարբեր դերեր և հաջողությամբ իրականացնի դրանք:	1. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ:	1. Հաղորդակցվելի ս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցներ ի և այլոց նկատմամբ:
	<b>Արժևորում</b>	1. Սիրի իրեն, իր ընտանիքը, հայրենիքը:	1. Սիրի իրեն, իր ընտանիքը, հայրենիքը:	1. Սիրի իրեն, իր ընտանիքը, հայրենիքը:	1. Սիրի իրեն, իր ընտանիքը, հայրենիքը:
		2. Դրսևորի հարգանք ուսուցիչների, դասընկերների, շրջապատող մարդկանց նկատմամբ:	2. Դրսևորի հարգանք ուսուցիչների, դասընկերների, շրջապատող մարդկանց նկատմամբ:	2. Դրսևորի հարգանք ուսուցիչների, դասընկերների, շրջապատող մարդկանց նկատմամբ:	2. Դրսևորի հարգանք ուսուցիչների, դասընկերների, շրջապատող մարդկանց նկատմամբ:
		3. Դրսևորի սեր և հարգանք դպրոցի, գրքի, շրջապատի նկատմամբ:	3. Դրսևորի հարգանք դպրոցի, գրքի, շրջապատի նկատմամբ:	3. Դրսևորի հարգանք դպրոցի, գրքի, շրջապատի նկատմամբ:	3. Դրսևորի հարգանք դպրոցի, գրքի, շրջապատի նկատմամբ:
		4. Ցուցաբերի	4. Ցուցաբերի	4. Ցուցաբերի	4. Ցուցաբերի

		<p>հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:</p>	<p>հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:</p> <p>5. Սիրի ընթերցանությունը:</p>	<p>հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:</p> <p>5. Արժևորի մայրենի լեզվի դերը իր կյանքում:</p>	<p>հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ:</p> <p>5. Կարևորի լեզվի դերը միտքը հասկանալի տեղ հասցնելու գործում:</p>
--	--	--	---	--	--

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	ԵՆԹԱՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	5-րդ դասարան	6-րդ դասարան
<b>ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ</b>	<b>ԲԱՆԱԿՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ</b>	1. Հասկանալի ձևակերպի և բացատրի սեփական զգացմունքները, ցանկությունները:	1. Հասկանալի ձևով նկարագրի և բացատրի սեփական զգացմունքները, ապրումները, ցանկությունները:
		2. Լսած կամ կարդացած նյութը վերաշարադրի համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ նպատակադրման և նախօրոք կազմած պլանի, արտահայտի և հիմնավորի սեփական տեսակետը դրա շուրջ:	2. Լսած կամ կարդացած նյութը վերաշարադրի համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ նպատակադրման և նախօրոք կազմած պլանի, արտահայտի և հիմնավորի սեփական տեսակետը դրա շուրջ:
		3. Ելույթ ունենա լսարանի առջև, տարբեր աղբյուրներից գտած նյութը վերաշարադրի և ներկայացնի սեփական բառերով (պարաֆրազ):	3. Ելույթ ունենա լսարանի առջև, տարբեր աղբյուրներից գտած նյութը ներկայացնի նոր ձևով, վերաձևակերպի, վերաշարադրի սեփական բառերով՝ տալով համապատասխան բացատրություններ (պարաֆրազ և պարզ վերլուծություն):
		4. Մասնակցի քննարկումների, կարողանա փաստեր բերել լսածից կամ կարդացածից՝ իր տեսակետը հիմնավորելու համար:	4. Մասնակցի քննարկումների, կարողանա տեղին փաստեր բերել լսածից կամ կարդացածից՝ իր տեսակետն ապացուցելու համար:
	<b>ԳՐԱԿՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ</b>	1. Կազմի հարցեր կամ պլան լսածի և կարդացածի շուրջ և գրավոր վերաշարադրի դեպքերի հաջորդական ընթացքը:	1. Կազմի հարցեր կամ պլան լսածի և կարդացածի շուրջ և գրավոր վերաշարադրի դեպքերի հաջորդական ընթացքը՝ բացատրելով հերոսի (հերոսների) արարքների դրդապատճառները:
		2. Լսած կամ կարդացած նյութից համապատասխան	2. Լսած կամ կարդացած նյութից համապատասխան

		մեջբերումներ անի՝ պահպանելով հղում կատարելու կանոնները:	մեջբերում ներ անի՝ բացատրություններ տալով: Պահպանի և հետևի հղում կատարելու կանոններին:
		3. Գրի հրավիրատոմս, հայտարարություն, նամակ՝ գրավոր հաղորդելով սեփական ապրումները, զգացողությունները:	3. Գրի ինքնակենսագրություն, բնութագիր, տարբեր ոճերի նամակներ՝ գրավոր շարադրելով և հաղորդելով սեփական ապրումները, զգացողությունները՝ վեր հանելով ազգային, պետական-հասարակական և տարիքին մատչելի խնդիրներ:
		4. Գրավոր նկարագրի շրջապատող միջավայրը, բնությունը, մարդկանց արտաքինը՝ կիրառելով մակդիրներ, համեմատություններ:	4. Գրավոր նկարագրի շրջապատող միջավայրը, բնությունը, մարդկանց արտաքինը և բնավորության որոշ կողմեր՝ կիրառելով մակդիր, փոխաբերություն, համեմատություն, անձնավորում:
	<b>ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ</b>	1. Կազմի համեմատության աղյուսակներ՝ ցույց տալով երևույթների, առարկաների ընդհանրությունը և տարբերությունը:	1. Կազմի համեմատության աղյուսակներ՝ ցույց տալով երևույթների, առարկաների, կենդանիների, մարդկանց ընդհանրությունը և տարբերությունը:
		2. Հաղորդելիք նյութի համար ընտրի համապատասխան երաժշտություն, կտավի վերատպություն, քանդակ, մուլտֆիլմից հատվածներ և անհրաժեշտ բացատրություններ տա:	2. Հաղորդելիք նյութի համար ընտրի համապատասխան երաժշտություն, կտավի վերատպություն, քանդակ, մուլտֆիլմից, գեղկինոնկարից հատվածներ և անհրաժեշտ բացատրություններ տա:
		3. Նկարագրողումներ անի, ապիկացիայով, ծեփամածուկով կենդանիներ, մարդուկներ և այլն ծեփի հաղորդելիք նյութը առավել գրավիչ դարձնելու համար:	3. Նկարագրողումներով, ապիկացիայով, ծեփելով ուղեկցելույթը՝ հաղորդելիք նյութը առավել գրավիչ դարձնելու համար:
		4. Պատրաստի գրքույկ, պաստառ, սահիկաշար հաղորդելիք նյութի շուրջ:	4. Պատրաստի գրքույկ, պաստառ, սահիկաշար հաղորդելիք նյութի շուրջ:
<b>ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>ՏԵՔՍՏԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b>	1. Արտահայտիչ, վարժ կարդա գրական արձակ և չափածո տեքստերը՝ պահպանելով հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը, հասկանալով դեպքերի հաջորդականությունը և տրամաբանությունը:	1. Արտահայտիչ, վարժ կարդա գրական արձակ և չափածո տեքստերը՝ պահպանելով հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը հասկանալով դեպքերի հաջորդականությունը և տրամաբանությունը:
		2. Գրական արձակ և չափածո տեքստից ընտրի համապատասխան հատվածներ՝ բացատրելով դրանք՝ կատարելով կանխատեսումներ դեպքերի հետագա զարգաց	2. Գրական արձակ և չափածո տեքստից ընտրի համապատասխան հատվածներ՝ բացատրելով և վերլուծելով դրանք՝ կատարելով կանխատեսումներ դեպքերի հետագա

		ման շուրջ:	գա գարգացման շուրջ:
		3. Տեքստում գտնի գրական կերպարի արտաքինի, բնավորության գծերի նկարագրություններ, արաքների դրդապատճառները բացահայտող խոսքային միջոցները և դրանք նորովի կիրառի սեփական խոսքում:	3. Տեքստում գտնի գրական կերպարի արտաքինի, բնավորության գծերի նկարագրություններ, արաքների դրդապատճառները բացահայտող խոսքային միջոցները և դրանք նորովի կիրառի սեփական խոսքում:
		4. Տեքստում գտնի, բացատրի, իր խոսքում նորովի կիրառի պատկերավորման և արտահայտչական միջոցները:	4. Տեքստում գտնի, վերլուծի, իր խոսքում նորովի կիրառի պատկերավորման և արտահայտչական միջոցները:
	<b>ՏԵՔՍՏԻ ՏՐԱՄԱԲՆՈՒԹՅՈՒՆ</b>	1. Գրական և ոչ գրական տեքստի շուրջ կազմի պլան, մշակի հարցեր, ըստ դրանց՝ ձևակերպի պատասխաններ, կառուցի կապակցված խոսք, վերապատմի տեքստի բովանդակությունը սեփական բառերով:	1. Գրական և ոչ գրական տեքստի շուրջ կազմի պլան, մշակի հարցեր, ըստ դրանց՝ ձևակերպի պատասխաններ, կառուցի կապակցված խոսք, վերապատմի տեքստի բովանդակությունը սեփական բառերով:
		2. Գրական և ոչ գրական տեքստերում ցույց տա պատճառահետևանքային կապերը, տրամաբանական հաջորդականութունը, տեքստը վերապատմի, վերաշարադրի բանավոր և գրավոր՝ հետևելով տեքստի տրամաբանութունը:	2. Գրական և ոչ գրական տեքստերում ցույց տա և բացատրի պատճառահետևանքային կապերը, տրամաբանական հաջորդականութունը, տեքստը վերապատմի, վերաշարադրի բանավոր և գրավոր՝ հետևելով տեքստի տրամաբանութունը:
		3. Գրական և ոչ գրական տեքստի միտքը հաղորդի գծապատկերներով, աղյուսակներով, պատկերներով և ոչ խոսքային հաղորդակցման ՏՏ և այլ միջոցներով:	3. Գրական և ոչ գրական տեքստի միտքը հաղորդի գծապատկերներով, աղյուսակներով, պատկերներով և ոչ խոսքային հաղորդակցման, ՏՏ և այլ միջոցներով:
		4. Տեքստից համապատասխան մեջբերումներ անի՝ իր ասելիքն ապացուցելու համար՝ նշելով հեղինակին, ստեղծագործութունը:	4. Տեքստից համապատասխան մեջբերումներ անի՝ բացատրություններ տալով, նշելով հեղինակին, ստեղծագործութունը:
<b>ԼԵԶԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ</b>	<b>Հայերենի հնչյունական համակարգ. Ուղղախոսություն / Ուղղագրություն</b>	1. Իմանա և բանավոր խոսքում ճիշտ կիրառի հայերենի հնչյունական համակարգի արտաբերման և արտասանության առանձնահատկութունները:	1. Իմանա և բանավոր խոսքում ճիշտ կիրառի հայերենի հնչյունական համակարգի արտաբերման և արտասանության առանձնահատկութունները:



		<p>2. Իմանա հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, գրական լեզվում դրանց արտասանության և գրութայան տարբերությունները, ճիշտ արտասանի և ճիշտ գրի այն բառերը, որոնց արտասանությունը և գրությունը տարբեր են:</p>	<p>2. Իմանա հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, գրական լեզվում դրանց արտասանության և գրութայան տարբերությունները ճիշտ արտասանի և ճիշտ գրի այն բառերը, որոնց արտասանությունը և գրությունը տարբեր են:</p>
		<p>3. Իմանա հայերենի բառա յին և տրամաբանական շեշտի մասին և բանավոր խոսքում պահպանի հայերենին հատուկ շեշտադրումը, ցույց տա բառի շեշտագուրկ բաղադրիչի հնչյունափոխությունը:</p>	<p>3. Իմանա հայերենի բառային և տրամաբանական շեշտի մասին և բանավոր խոսքում պահպանի հայերենին հատուկ շեշտադրումը, ցույց տա բառի շեշտագուրկ բաղադրիչի հնչյունափոխությունը:</p>
		<p>4. Չափածո գրական տեքստերում գտնի և ցույց տա հնչյունական արտահայտ չամիջոցները, ռիթմը, հանգավորումը, վերլուծի դրանց դերը բանաստեղծական երկի մեջ:</p>	<p>4. Չափածո գրական տեքստերում գտնի և ցույց տա հնչյունական արտահայտ չամիջոցները, ռիթմը, հանգավորումը, վերլուծի դրանց դերը բանաստեղծական երկի մեջ:</p>
<p style="text-align: center;"><b>Հայերենի բառագիտական, բառակազմական համակարգ</b></p>		<p>1. Իմանա հայերենի բառերի տեսակներն ըստ իմաստի, բանավոր և գրավոր խոսքում ճիշտ և տեղին կիրառի հոմանիշ, հականիշ, մեկիմաստ, բազմիմաստ, համանուն, հարանուն բառերը, դարձվածքները:</p>	<p>1. Իմանա հայերենի բառերի տեսակներն ըստ իմաստի, բանավոր և գրավոր խոսքում ճիշտ և տեղին կիրառի հոմանիշ, հականիշ, մեկիմաստ, բազմիմաստ, համանուն, հարանուն բառերը, դարձվածքները:</p>
		<p>2. Իմանա հայերենի բառակազմության առանձնահատկությունները, կարողանա կազմել բառեր, դրանք տեղին կիրառել սեփական խոսքում:</p>	<p>2. Իմանա հայերենի բառակազմության առանձնահատկությունները, կարողանա կազմել բառեր, դրանք տեղին կիրառել սեփական խոսքում:</p>
		<p>3. Իմանա և ըմբռնի բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, տեքստում գտնի բառերի փոխաբերական կիրառությունները, բացատրություններ տա՝ հիմնվելով տեքստի, պարբերության, նախադասության արտահայտած հիմնական գաղափարի վրա:</p>	<p>3. Իմանա և ըմբռնի բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, տեքստում գտնի բառերի փոխաբերական կիրառությունները, բացատրություններ տա՝ հիմնվելով տեքստի, պարբերության, նախադասության արտահայտած հիմնական գաղափարի վրա:</p>
		<p>4. Իմանա տպագիր և էլեկտրոնային բացատրական, հոմանիշների բառարաններից օգտվելու կանոնները, կարողանա իրեն անհրաժեշտ բառերը գտնել հայերենի տարա տեսակ բառարաններից:</p>	<p>4. Իմանա տպագիր և էլեկտրոնային բացատրական, հոմանիշների բառարաններից օգտվելու կանոնները, կարողանա իրեն անհրաժեշտ բառերը գտնել հայերենի տարա տեսակ բառարաններից:</p>

	<b>Ոճաբանություն</b>	1. Տեքստը վերլուծի ըստ պատկերավոր արտահայտչամիջոցների կիրառության:	1. Տեքստը վերլուծի ըստ պատկերավոր արտահայտչամիջոցների կիրառության:
		2. Վերլուծի և բացատրի հեղինակի խոսքի և ոճի առանձնահատկությունները:	2. Վերլուծի, բացատրի, գնահատի հեղինակի խոսքի և ոճի առանձնահատկությունները:
		3. Իմանա, ըմբռնի և կապա կցված խոսքի մեջ տեղին կիրառի խոսքի պատկերավորման միջոցները:	3. Իմանա, ըմբռնի, կապակցված խոսքի մեջ տեղին կիրառի խոսքի պատկերավորման վորման արտահայտչամիջոցները:
		4. Կազմի խոսք ըստ իրադրության՝ ճիշտ և տեղին կիրառելով գրա կան արձակ և չափածո տեքստերից սովորած բառերը:	4. Կազմի խոսք ըստ իրադրության՝ ճիշտ և տեղին կիրառելով գրական արձակ և չափածո տեքստերից սովորած բառերը, բառակապակցությունները:
<b>ՍՏԵՂՃԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ</b>	<b>ԿԱՊԱԿՑՎԱՆՑ ԽՈՍՔ ՏԵՔՍՏ</b>	1. Չարգացնի տրված տեքստը (ավելացնի, լրացնի, փոփոխի). Նոր հերոսներ, կերպարներ ավելացնի կամ ընդհակառակը՝ սեղմի, պակասեցնի: Փոփոխի պատմողի դիտանկյունը: Սկսի, շարունակի և ավարտի պատմությունը նորովի:	1. Չարգացնի տրված տեքստը (ավելացնի, լրացնի, փոփոխի). Նոր հերոսներ, կերպարներ ավելացնի կամ ընդհակառակը՝ սեղմի, պակասեցնի: Փոփոխի պատմողի դիտանկյունը: Սկսի, շարունակի և ավարտի պատմությունը նորովի:
		2. Ձևակերպի և տեղին ընտրված բառերով հաղորդի սեփական երևա կայության պատկերները:	2. Ձևակերպի և տեղին ընտրված բառերով հաղորդի սեփական երևակայության պատկերները:
		3. Հորինի պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (կոմիքս, ծաղրանկար և այլն):	3. Հորինի պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (կոմիքս, ծաղրանկար և այլն):
		4. Կազմի տարբեր ժանրերի և տարբեր ոճերի, գրա կան և ոչ գրական բանա վոր և գրավոր տեքստեր:	4. Կազմի տարբեր ժանրերի և տարբեր ոճերի, գրական և ոչ գրական բանավոր և գրավոր տեքստեր:
		5. Ըստ տեքստի ստեղծի տարաբնույթ ուսումնա կան նյութեր՝ պաստառ, գրքույկ, սահիկաշար, անիմացիա և այլն:	5. Ըստ տեքստի ստեղծի տարաբնույթ ուսումնական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, փոթբաստ և այլն:
	<b>ՀԵՏԱՁՈՏՈՒՄ. ՆԱԽԱԳԻՃ</b>	1. Ձևակերպի հետազոտա կան հարց, սահմանի հետազոտության նպատակը, հիմնախնդիրը: Պլանավորի կատարելիք քայլաշարը:	1. Ձևակերպի հետազոտական հարց դրույթի վերաբերյալ, սահմանի հետազոտության նպատակը, հիմնախնդիրը: Պլանավորի կատարելիք քայլաշարը:

		<p>2. Գտնի և առանձնացնի համապատասխան արքյուրներ, հավաքի հետազոտության հետ առնչվող փաստեր:</p> <p>3. Ծանոթանա տարիքին համապատասխան որո շակի կայքէջերում տեղ գտած հեղինակների ստեղծագործություններն ընդհանուր առմամբ:</p> <p>4. Գտած տեղեկությունը վերաշարադրի տարբեր ձևերով՝ հակիրճ կամ մանրամասն. սեփական դիտարկումներ հավելելով, կարծիք հայտնելով. խոսքի տարբեր տեսակներով՝ մենա խոսուություն, երկխոսություն, գովազդ և այլն:</p>	<p>2. Գտնի և առանձնացնի համա պատասխան արքյուրներ, հավաքի հետազոտության հետ առնչվող նյութեր:</p> <p>3. Ծանոթանա տարիքին համա պատասխան որոշակի կայքէջերում տեղ գտած հեղինակների ստեղծագործություններն ընդհանուր առմամբ:</p> <p>4. Գտած տեղեկությունը վերա շարադրի տարբեր ձևերով՝ հակիրճ կամ մանրամասն. սեփական դիտարկումներ հավելելով, կարծիք հայտնելով. խոսքի տարբեր տեսակներով՝ օրագրություն, մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց, գովազդ և այլն:</p>
<b>ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԷ</b>	<p>1. Համագործակցի ընկերներն ընդհանուր առմամբ, դրսևորի հան դուրժողականություն:</p> <p>2. Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</p> <p>3. Գրավոր և բանավոր խոս քում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ:</p> <p>4. Հաղորդակցվելիս հար գալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակից ների և այլոց նկատմամբ:</p>	<p>1. Համագործակցի ընկերների հետ, դրսևորի հանդուրժողականություն:</p> <p>2. Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</p> <p>3. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատ մամբ:</p> <p>4. Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ:</p>
	<b>ԱՐԺԵՎՈՐՈՒՄ</b>	<p>1. Արժևորի մայրենի լեզվի դերը այլ լեզուների շար քում:</p> <p>2. Կարևորի լեզվի դերը միտքը տեղ հասցնելու և հասկանալի դառնալու գործում:</p> <p>3. Մայրենի լեզվի հնչյունա կան, գրային, բառագիտա կան համակարգերը համեմատի այլ լեզուների համակարգերի հետ, գտնի ընդհանրություն ներն ու տարբերություն ները:</p>	<p>1. Արժևորի մայրենի լեզվի դերը այլ լեզուների շարքում:</p> <p>2. Կարևորի լեզվի դերը միտքը տեղ հասցնելու և հասկանալի դառնալու գործում:</p> <p>3. Մայրենի լեզվի հնչյունական, գրային, բառագիտա կա, բառակազմական համա կարգերը համեմատի այլ լեզուների համակարգերի հետ, գտնի ընդհանրություն ներն ու տարբերություն ները:</p>

		4. Կատարի պարզ նյութերի հայերեն թարգմանություններ օտար լեզուներից և արժևորի մայրենի լեզվի բառիմաստային հնարավորությունները թարգմանություն կատարելիս:	4. Կատարի ոչ բարդ նյութերի հայերեն թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի բառապաշարի, բառիմաստի և բառակազմական հնարավորությունները թարգմանական գրականության մեջ:
--	--	--	---

## ՄԱՅՐԵՆԻ ՆՐԱԳՐԵՐ 1-6-րդ դասարաններ

**1-ին դասարան  
Շաբաթական 7 դասաժամ, տարեկան 210 դասաժամ**

<b>Թեմաներ* և ենթաթեմաներ**</b>		
ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ	ՈՐՏԵՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ	ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ
<b>1 – 4-րդ դասարաններում ուսումնա սիրում են</b> սեփական ներաշխարհը, արժեքները, անձնական ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սոցիալական ձեռքբերումները, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում ընկերների միջև, իրավունքները և պարտականությունները, հասկանում են՝ ինչ է նշանակում լինել մարդ:	<b>1 – 4-րդ դասարաններում ուսումնա սիրում են</b> ժամանակի և տարածու թյան մեջ կողմնորոշումը, նշանա վոր մարդկանց և նշանավոր տոհ մերի պատմությունները, ճանապարհորդություններ, հայտնագործություններ, մարդկանց տեղաշարժեր (միգրացիաներ), միջանձնային փոխհարաբերություններն ու կապերը:	<b>1 – 4-րդ դասարաններում ուսում նասիրում են</b> մարդու և հանրության ստեղծած համակարգերի փոխհարաբերությունները, դրանց կառուց վածքն ու գործառույթները, տնտեսական գործունեությունը և ազդեց ությունը մարդու և շրջակա միջա վայրի վրա:
<b>Գրաճանաչություն 126 դասաժամ</b>		
<b>Չիմնական նպատակները</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. հաղորդակցվելու պահանջմունքի բավարարում</li> <li>2. ինքնաարտահայտվելու կարողության զարգացում</li> <li>3. լսելու և խոսելու կարողությունների զարգացում</li> <li>4. բառապաշարի հարստացում</li> <li>5. հնչյունային լսողության զարգացում</li> <li>6. կարդալու և գրելու կարողությունների զարգացում</li> <li>7. համեմատելու, հակադրելու և դասակարգելու կարողությունների զարգացում</li> <li>8. հոգեկան գործընթացների զարգացում</li> </ol>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<ul style="list-style-type: none"> <li>✓ <i>խոսի</i> իր, իր ցանկությունների, առանձնահատկությունների, իրեն հետաքրքրող հարցերի, իր կատարած գործողությունների մասին</li> <li>✓ <i>լսի</i> խոսողին, համապատասխան <i>արձագանք տա</i></li> </ul>		

- ✓ *ձևակերպի* հարցեր լսածի, տեսածի, զգացածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և *պատասխանի* տրված հարցերին
- ✓ *ունկնդրի* գրական և ոչ գրական տեքստեր, *պատասխանի* բովանդակության վերաբերյալ հարցերին, *վերարտադրի* դրանք
- ✓ *արտասանի* բանաստեղծություններ, հանելուկներ
- ✓ *դիտի, համեմատի* պատկերներ, առարկաներ, *գտնի* նմանություններ և տարբերություններ
- ✓ *արտահայտի* մտքերը հասկանալի՝ պահպանելով ուղղախոսական պարզ կանոնները
- ✓ *տարբերակի* ձայնավոր և բաղաձայն հնչյունները արտասանության միջոցով
- ✓ խոսքում տեղին և ճիշտ *կիրառի* նոր սովորած բառերը
- ✓ *կարդա* ոչ ծավալուն պարզ տեքստեր
- ✓ *արտահայտի* իր մտքերը կարդացածի վերաբերյալ՝ պատասխանելով տրված հարցերին
- ✓ *ներկի, մանրագծի, ստանա* պատկերներ
- ✓ *կողմնորոշվի* տողերի մեջ, *գրի* հայերենի ձեռագիր փոքրատառերն ու մեծատառերը
- ✓ *գրի* բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ոչ ծավալուն տեքստ՝ պահպանելով վայելչագրական պարզ կանոնները
- ✓ *աշխատի* խմբում՝ ստանձնելով որոշակի դերեր:

**Բովանդակություն**

- Պատմություններ, հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, հումորային մանրապատումներ երեխաների, սրանց հետաքրքրությունների ու զբաղմունքների, արկածների, տան և ընտանիքի, դպրոցի ու դպրոցական առօրյայի, ընկերների, ընկերության և մարդկանց փոխհարաբերությունների մասին:
- Ոչ գրական պարզ տեքստեր մարդկանց զբաղմունքի, հետաքրքրությունների, մարդու ստեղծած բարիքների, ընկերության, մարդու մարմնի կառուցվածքի ու աշխատանքի, հիգիենայի մասին:
- Հայերենի հնչյունները (ձայնավոր և բաղաձայն):
- Հայերենի տառերը (տպագիր և ձեռագիր):
- Բառ, նախադասություն, տեքստ:

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>✓ Պատմել իր, իր ընտանիքի, տան, ընկերների, խաղալիքների և այլ ամենի մասին, ինչ շոջապատում է իրեն, կատարած գործողությունների, տարբեր իրադարձությունների մասին՝ ցանկության դեպքում օգտվելով իր նկարած նկարներից, լուսանկարներից, տեսաձայնագրություններից կամ օգտագործելով իրեր, առարկաներ:</li> <li>✓ Սովորել և արտասանել բանաստեղծություններ, մանրապատում ստեղծագործություններ՝ հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ:</li> <li>✓ Հյուսել պատմություններ թեմատիկ նկարների վերաբերյալ, հորինել հեքիաթներ:</li> <li>✓ Մասնակցել խմբային աշխատանքների՝ պատմություններ հորինելու, թեմատիկ աշխատանքներ ստեղծելու, փոքրիկ ուսումնասիրություններ կատարելու նպատակով:</li> <li>✓ Ունկնդրել և վերարտադրել հեքիաթ, պատմություն, առակ և այլն:</li> <li>✓ Կատարել հնչյունային լսողությունը զարգացնող վարժություններ, բառի մեջ առանձնացնել հնչյունը/հնչյունները, որոշել հնչյունի ձայնավոր կամ բաղաձայն լինելը խաղերի, գործնական աշխատանքների միջոցով:</li> <li>✓ Կատարել վարժություններ նույն հնչյունը բառի տարբեր դիրքերում կիրառելու վերաբերյալ, թվարկել միևնույն հնչյունային կառուցվածքով տարբեր բառեր:</li> <li>✓ Մասնակցել հոգեկան գործընթացների, մասնավորապես՝</li> </ul>	<p><b>Անհատներ և հարաբերություններ.</b> Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունքների իրացում:</p> <p><b>Ժամանակ և տարածություն.</b> Որտե՞ղ և ե՞րբ. տարբեր մարդկանց կենցաղը, անձնական պատմությունները, ձեռքբերումները, դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում:</p>

